

Հաստատված է

28.02.2019թ. «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ-ի հիմնադիր ժողովի կողմից
Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

Կ.Տ.

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. «ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) Ներդրումային ծառայությունների մատուցման ընթացակարգը (այսուհետ՝ Ընթացակարգ) սահմանում է Ընկերության կողմից հաճախորդներին ներդրումային ծառայությունների մատուցման, ներդրումային ծառայությունների մատուցման շրջանակներում Ընկերության և հաճախորդների միջև տեղեկատվության փոխանակման, փաստաթղթաշրջանառության, մատուցվող ծառայությունների հետ կապված գրանցումների վարման, հաշվարկման և պահպանման կարգը, ներդրումային ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացման սկզբունքները, հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունները, նշված գործընթացի հետ կապված ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումները և այլ հարաբերությունները:
- 1.2. Սույն Կանոններին համապատասխան, Ընկերությունը մատուցում է Բրոքերային ծառայություններ ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և (կամ) առևտրին թույլատրված կամ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող Կարգավորվող շուկաների ցանկում ընդգրկված որևէ Կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված, ինչպես նաև Հաճախորդի կողմից Ընկերությանը ներկայացված Պատվերներում նշված այլ Արժեթղթերով:
- 1.3. Սույն Կանոնները հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որը սահմանում է Բրոքերային ծառայությունների մատուցման պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») պայմանները, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ:
- 1.4. Սույն ընթացակարգը մշակվել է հաշվի առնելով «Արժեթղթերի շուկային մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ ԿԲ Խորհրդի որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» Կանոնակարգ 4/07-ը (այսուհետ՝ Կանոնակարգ 4/07), ինչպես նաև ներդրումային գործունեությունը կանոնակարգող այլ օրենքները և ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերի պահանջները:
- 1.5. Սույն ընթացակարգի իմաստով՝
«Պոտենցիալ հաճախորդ»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը ցանկանում է դառնալ Ընկերության հաճախորդ՝ կնքելով ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր:

«**Հաճախորդ**»՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որն Ընկերության հետ ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել

«**Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց**»՝ ցանկացած միջոց, որը Հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա լիարժեք օգտագործել և վերարտադրել պահպանված տեղեկատվությունը,

«**Պատասխանատու աշխատակից**»՝ Ընկերության Դիրեկտորի գործառնությունների բաժնի՝ Օրենքի համաձայն որակավորված աշխատակից,

«**Ներդրումային ծառայություններ**»՝ Օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածներով սահմանված և Ընկերության կողմից մատուցվող ներդրումային ծառայություններ,

«**Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր**»՝ Ներդրումային ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի և Ընկերության միջև կնքված գրավոր փաստաթուղթ, որով սահմանվում են Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման, կատարման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվությունների ներկայացման կարգը և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները,

«**Պատվեր**»՝ արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև Ընկերության հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը:

1.6. Սույն ընթացակարգում կիրառվող այլ հասկացություններն ունեն Օրենքով, Կանոնակարգ 4/07-ով, այլ նորմատիվ և Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված նշանակությունը:

- 1.7. Ընկերության կողմից մատուցվող հիմնական ներդրումային ծառայություններից են՝
- հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը,
 - Ընկերության կամ Հաճախորդի անունից և Հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարումը,
 - Արժեթղթերում ներդրումների հետ կապված խորհրդատվության տրամադրում հաճախորդներին:
 - Արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխում

1.8. Ընկերության կողմից մատուցվող ոչ հիմնական ներդրումային ծառայություններից են՝

- խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը,
- արժեթղթերի թողարկման կամ տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցումը
- արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործառնությունների իրականացումը,
- արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը:

1.9. Սույն ընթացակարգը սահմանում է ոչ հիմնական ներդրումային ծառայությունների մատուցման կարգը:

2. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Նախքան ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրի կնքումը և ներդրումային ծառայությունների մատուցումը, Բրոկերային գործառնությունների բաժնի պատասխանատու աշխատակիցը Հաճախորդին հնարավորություն է ընձեռում ծանոթանալու ներդրումային ծառայությունների մատուցումը կարգավորող Ընկերության ներքին իրավական ակտերին, ինչպես նաև Հաճախորդին տրամադրում է տեղեկատվություն՝

- 2.1.1. Ընկերության և վերջինիս կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների վերաբերյալ, ինչպես նաև շահերի բախումների կանխարգելման նպատակով Ընկերության կողմից իրականացվող միջոցառումների համառոտ նկարագրի վերաբերյալ (Հաճախորդի պահանջի դեպքում՝ վերջինիս է տրամադրվում շահերի բախման սահմանափակման վերաբերյալ Ընկերության ներքին իրավական ակտն ամբողջությամբ), Ընկերության կողմից պատվերների ընդունման և հաղորդման կարգի վերաբերյալ,
- 2.1.2. արժեթղթերի և արժեթղթերով գործարքների իրականացման հետ կապված հնարավոր ռիսկերի վերաբերյալ (Հավելված 1),
- 2.1.3. գործարքի կնքման վայրի (միջոցի) մասին (ֆոնդային բորսա, այլ կարգավորվող շուկա կամ չկարգավորվող շուկա),

- 2.1.4. համապատասխան ծախսերի և միջնորդավճարների մասին, որը ներառում է՝ ներդրումային ծառայություններից օգտվելու համար Հաճախորդի կողմից վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են Ընկերության կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա ներկայացվում է հաշվարկման կարգ: Եթե համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը,
- 2.1.5. վճարումներ կատարելու եղանակները,
- 2.1.6. եթե Ընկերությունը տիրապետում է Հաճախորդի միջոցներին, ապա համառոտ այն քայլերի մասին, որոնք Ընկերության կողմից ձեռնարկվում են Հաճախորդի միջոցների պաշտպանությունն ապահովելու համար,
- 2.1.7. տեղեկատվություն Հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին;
- 2.2. Ընկերության կողմից տրամադրվող ողջ տեղեկատվությունը Հաճախորդին ներկայացվում է պարզ, անկողմնակալ և առանց ապակողմնորոշիչ մտքերի, այնպես, որ չթաքցվեն կարևոր դրույթները կամ նախազգուշացումները, տպավորություն չստեղծվի, որ դրանք կարևոր չեն, հասկանալի լինի ներդրումների բնագավառում միջին մակարդակի գիտելիքներ և փորձ ունեցող մարդկանց համար և Հաճախորդներին հնարավորություն ընձեռի հասկանալու առաջարկվող կոնկրետ ներդրումային ծառայության և արժեթղթերի էությունն ու դրանց հետ կապված ռիսկերը
- 2.3. Ընկերությունն պարտավոր է մինչև Պատվերի ընդունումը Հաճախորդից պահանջել տեղեկատվություն մատուցվող բրոքերային ծառայության կամ արժեթղթի վերաբերյալ հաճախորդի գիտելիքների և փորձի մասին (Հավելված 2), մասնավորապես՝
- 2.3.1. Տեղեկություններ այն ներդրումային ծառայությունների, արժեթղթերով գործարքների և արժեթղթերի մասին, որոնց հետ որևէ կերպ առնչվել է հաճախորդը.
- 2.3.2. հաճախորդի կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը , ծավալը և հաճախականությունը, ինչպես նաև ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները
- 2.3.3. հաճախորդի կրթական մակարդակը, մասնագիտությունները և զբաղմունքը:

- 2.4. Այն դեպքում, եթե Ընկերությունը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ իր կողմից մատուցվող բրոքերային ծառայությունը կամ արժեթուղթը չի համապատասխանում հաճախորդի պահանջներին, ապա Ընկերությունը զգուշացնում է Հաճախորդին այդ մասին (Հավելված 3):
- 2.5. Այն դեպքում, երբ Հաճախորդը չի տրամադրում 2.4. կետով նշված տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Ընկերությունը պարտավոր է զգուշացնել Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք տվյալ ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում են Հաճախորդի պահանջներին (Հավելված 3):
- 2.6. Նախքան պայմանագրի կնքումը և բրոքերային ծառայությունների մատուցումը Ընկերությունը, դասակարգում է հաճախորդին որպես պրոֆեսիոնալ և ոչ պրոֆեսիոնալ համապատասխան նշում կատարելով իր հաճախորդների տվյալների մասին գրանցման բազայում: Որպես պրոֆեսիոնալ հաճախորդ կարող են դասակարգվել բացառապես որակավորված ներդրողները իրենց համաձայնությունը տալու դեպքում:
- 2.7. Այն հաճախորդները, որոնք Օրենքում նշված ներդրումային ծառայություններից որևէ մեկի կամ բոլոր ծառայությունների մասով տվել են իրենց համաձայնությունը որպես պրոֆեսիոնալ որակվելու համար, այդ մասին գրավոր հայտարարություն են ներկայացնում Ընկերությանը (Հավելված 4):
- 2.8. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար Հաճախորդը Ընկերություն է ներկայացնում պահանջվող փաստաթղթերը, որի կազմն ու բովանդակությունը կախված է կոնկրետ մատուցվող ծառայության տեսակից և կանոնակարգվում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ԿԲ նորմատիվ իրավական ակտերով և ներդրումային ծառայությունների մատուցման Ընկերության ներքին իրավական ակտերով:
- 2.9. Ընկերությունը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք է:

3. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

- 3.1. Հաճախորդը դիմում է Ընկերությանը՝ վերջինիս կողմից մատուցվող ներդրումային ծառայություններից օգտվելու նպատակով՝ ներկայացնելով օրենսդրությամբ և Ընկերության ներքին իրավական ակտերով նախատեսված փաստաթղթերը:

- 3.2. Հաճախորդի և Ընկերության միջև ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը կնքվում է գրավոր, երկու օրինակից, մեկ օրինակը տրամադրվում է Հաճախորդին, մյուսը մնում է Ընկերությունում:
- 3.3. Ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը սահմանում է՝
- Ընկերության և Հաճախորդի իրավունքներն ու պարտականությունները,
 - Ներդրումային ծառայությունների դիմաց վարձատրության չափի հաշվարկումը և վճարման կարգը,
 - Հաճախորդին հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը, ժամկետները և ձևը,
 - Հաճախորդի հետ կապի իրականացման կարգը, ինչպես նաև այն միջոցները, որոնք տվյալ Հաճախորդի համար հանդիսանում են տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ,
 - Պայմանագրի պահանջների չափահասման համար կողմերի պատասխանատվությունը,
 - Կողմերի միջև առաջացող վեճերի լուծման կարգը,
 - Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխությունների և լրացումների կատարման, գործողության դադարեցման կարգը
- 3.4. Ընկերության հետ Պայմանագիր կնքած Հաճախորդին Ընկերությունը շնորհում է նաև նույնականացնող համար /չկրկնվող տարբերակիչ ծածկագիր/, որը հնարավորություն է ընձեռում նույնականցնել Հաճախորդին:

4. Արժեթղթերով գործարքների իրականացման պատվերը

- 4.1. Հաճախորդը մինչև պատվերի ներկայացումը պարտավոր է Ընկերությանը տրամադրել իրավաբանական անձի անունից պատվեր ներկայացնելու իրավասություն ունեցող անձի լիազորությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագրի անհրաժեշտության դեպքում) և պատվեր ներկայացնող անձի անձնագրի պատճենը: Ֆիզիկական անձանց համար միայն անձնագրի պատճենը: Իսկ արժեթղթերի վաճառքի պատվեր ներկայացնելու դեպքում՝ վաճառքի առարկա հանդիսացող արժեթղթերի նկատմամբ սեփականության իրավունքը հավաստող փաստաթուղթ:
- 4.2. Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը (Հավելված 5) պետք է գրանցվի այն ստանալու օրը և պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- հաճախորդի անուն ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը (սահմանվում է հերթականության սկզբունքով)
- պատվերի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի).
- հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը.
- թողարկողի անվանումը.
- արժեթղթերի դասը.
- գործարքի տիպը (կարգավորվող շուկա/ կարգավորվող շուկայից դուրս).
- գործարքի տեսակը (առք, վաճառք).
- պատվերի տեսակը.
- արժեթղթերի քանակը, միավոր գինը, ընդհանուր ծավալը.
- գործարքի կնքման վայրը.
- հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ.
- պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ սահմանված Ընկերության և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

4.3. Հաճախորդի կողմից Ընկերությանը տրվող պատվերը պետք է ներառի՝

- հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ գնային պայմանների՝
 - Շուկայական հանձնարարական
 - Գնման/վաճառքի լիմիտային հանձնարարական
 - Գնման/վաճառքի ստոպ հանձնարարական
 - Գնման/վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական:
- հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ ծավալային պայմանների՝
 - Բավարարել լրիվ
 - Բավարարել մասնակի
 - Հանել մնացորդը:
- հանձնարարականի հետևյալ տեսակները՝ ըստ ժամանակային պայմանների՝
 - Անմիջապես բավարարել կամ հանել
 - Պահել հերթում մինչև բավարարումը:

4.4. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում միայն հաճախորդի կողմից Հավելված 5-ի համապատասխան լրացված և Ընկերությանը ներկայացված պատվերը: Վերջինս ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն:

- 4.5. Հաճախորդի կողմից պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Ընկերությանը, իսկ մյուս օրինակը վերադարձվում է հաճախորդին: Պատվերը պետք է ստորագրվի Հաճախորդի և Ընկերության գործադիր տնօրենի կողմից:
- 4.6. Այն դեպքում, երբ հաճախորդի կողմից ներկայացված պատվերով գործարքի կատարումը հակասում է վերջինիս ներդրումային նպատակներին Ընկերությունը պարտավոր է անմիջապես մինչև պատվերի կատարումը տեղեկացնել այդ մասին հաճախորդին, իսկ վերջինս էլ պարտավոր է ետ կանչել իր պատվերը, դրանում կատարել համապատասխան փոփոխություններ կամ փոփոխել Հավելված 5-ի համաձայն ներկայացված տեղեկությունները:
- 4.7. Հաճախորդը կարող է ետ կանչել ներկայացրած պատվերը համաձայն Հավելված 6-ի կամ պատվերում ծավալային կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել համաձայն Հավելված 7-ի, եթե տվյալ պատվերով դեռևս գործարք չի կնքվել Ընկերության կողմից: Փոփոխություններ պարունակող պատվերը ներկայացված է համարվում, եթե այն ուղարկվել է էլեկտրոնային փոստով, ֆաքսով կամ ներկայացվել է առձեռն: Փոփոխություններ պարունակող պատվերը տրվում է երկու օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Ընկերությանը, իսկ մյուս օրինակը վերադարձվում է հաճախորդին: Այն պետք է ստորագրվի Հաճախորդի և Ընկերության գործադիր տնօրենի կողմից:
- 4.8. Ընկերությունը վարում է գրանցումներ հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով պատվերների գրանցամատյանում: Այդ գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:
- 4.9. Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասին գրանցումները առնվազն ներառում են հետևյալ տեղեկությունները
- հաճախորդի անուն ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը (սահմանվում է հերթականության սկզբունքով)
 - հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը.
 - թողարկողի անվանումը.
 - արժեթղթերի դասը.
 - գործարքի տիպը (կարգավորվող շուկա/ կարգավորվող շուկայից դուրս).
 - գործարքի տեսակը (առք, վաճառք).
 - պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն)
 - արժեթղթերի քանակը, միավոր գինը, ընդհանուր ծավալը.

- պատվերն ընդունող աշխատակցի սկզբնատառերը
- հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ
- պատվերի ստացման հստակ ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի)

5. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՈՒՄՆ, ԿԱՏԱՐՈՒՄՆ և ԳՐԱՆՑՈՒՄՆ

- 5.1. Ընկերության կողմից գործարքները կնքվում են՝
- ֆոնդային բորսայում՝ բրոքերի կողմից բորսայական առևտրի ընթացքում հայտ ներկայացնելու միջոցով.
 - Ֆոնդային բորսայից դուրս՝ բրոքերի կողմից ֆոնդային բորսայից դուրս արժեթղթերի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:
- 5.2. Ֆոնդային բորսայում բրոքերի կողմից գործարքները կնքվում և կատարվում են ֆոնդային բորսայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:
- 5.3. Արտաբորսայական գործարքներն Ընկերության կողմից կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն:
- 5.4. Բրոքերային գործարքների մասով գրանցումները պետք է վարվեն այնպիսի եղանակով կամ միջոցներով, որպեսզի բավարարվեն հետևյալ պայմանները.
- Կենտրոնական բանկի պահանջով այդ գրանցումները պետք է հասանելի և մատչելի լինեն Կենտրոնական բանկին և պետք է հնարավոր լինի վերծանել կատարված յուրաքանչյուր գործարքի յուրաքանչյուր փուլ,
 - եթե այդ գրանցումներում փոփոխություններ կամ լրացումներ են կատարվում, ապա դրանք պետք է կատարվեն այնպես, որպեսզի հնարավոր լինի պարզել այդ գրանցումների սկզբնական բովանդակությունը և յուրաքանչյուր փոփոխությունը կամ լրացումը,
 - պետք է բացառվի երրորդ անձանց կողմից այդ գրանցումների չթույլատրված օգտագործումը:

6. ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

- 6.1. Պատվերի հիման վրա արժեթղթերի գնման կամ վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո անհապաղ, սակայն ոչ ուշ քան գործարքի կնքման հաջորդ

աշխատանքային օրվա ավարտը Ընկերությունը պարտավոր է հաճախորդին առձեռն ներկայացնել կամ տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով տրամադրել գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն (ընթացիկ հաշվետվություն) (Հավելված 8):

- 6.2. Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա Ընկերությունը հաճախորդին ընթացիկ հաշվետվություն է ներկայացնում ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:
- 6.3. Ընկերությունը, հաճախորդի պահանջով, պարտավոր է ամսական կտրվածքով հաճախորդին տրամադրել վերջինիս պատվերների հիման վրա կատարված գործարքների և արժեթղթերով ու դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ հաշվետվություններ (պարբերական հաշվետվություններ) (Հավելված 9; Հավելված 10):

7. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՊԱՏՎԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ, ԱՐԳԵԼՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 7.1. Ընկերությունը հաճախորդների Պատվերներն իրականացնում է անկողմնակալ և ճշգրիտ: Մասնավորապես այլ հավասար պայմաններով Պատվերների կատարումը Ընկերությունը իրականացնում է ըստ դրանց ստացման հաջորդականության՝ հենվելով բացառապես Հաճախորդի կողմից տրված գնային, ծավալային, քանակական կամ առանձնահատուկ ցուցումների վրա, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակներն անհնարին չեն դարձնում դրանց հաջորդական կատարումը:
- 7.2. Ներդրումային ծառայություններ մատուցելիս Ընկերությունը.
 - համոզվում է, որ գործարք կատարելու Պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
 - պատշաճ կատարում է այլ հավասար պայմաններ ունեցող Պատվերներն՝ ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե Պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակներն անհնարին են դարձնում դրանց հաջորդական կատարումը,
 - Հաճախորդին անհապաղ տեղեկացնում է այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում Հաճախորդի Պատվերի ճշգրիտ կատարումը:

- 7.3. Ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով, Ընկերությունը կարող է համախմբել Հաճախորդի Պատվերը իր մեկ այլ հաճախորդի Պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե
- որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա Պատվերը կատարվեր առանձին,
 - ընդհանուր առմամբ այն բխում է հաճախորդների շահերից:
- 7.4. Ընկերությունը ձեռնարկում է բոլոր խելամիտ քայլերը կատարելու համար Հաճախորդի Պատվերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գործարքի գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), Պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, Պատվերի ընդհանուր ծավալը, Պատվերի բնույթը և Պատվերի կատարման հետ կապված այլ գործոնները:
- 7.5. Սույն ընթացակարգի 12.4 կետում նշված գործոնների հարաբերական կարևորությունը կամ կարևորության աստիճանը որոշելու համար հաշվի են առնվում հետևյալ չափանիշները.
- հաճախորդի պատվերի էական պայմանները (գնային, ծավալային և քանակական պայմանները, հաճախորդի առնաձեռնահատուկ ցուցումները և այլն)
 - հաճախորդի պատվերում նշված արժեթղթերի բնութագրիչները (դասը և այլն),
 - գործարքի կնքման վայրի (միջոցի) առանձնահատկությունները:
- 7.6. Ընկերությանը արգելվում է հաճախորդին գործարք կնքելու խորհուրդ տալ՝ նախապես իմանալով, որ տվյալ գործարքի կնքումը չի բխում հաճախորդի շահերից, կամ տվյալ գործարքը կնքվում է գնային չարաշահումների նպատակով.
- 7.7. Ընկերությանը, նրա ղեկավարներին և աշխատակիցներին, արժեթղթերով գործարքների հանձնարարականներ կատարող այլ անձանց, արժեթղթերի շուկայում վերլուծություններ իրականացնող կամ ներդրումային առաջարկություններ կազմող և (կամ) տարածող անձանց արգելվում է շուկայի չարաշահումներ իրականացնելը:

8. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԳՆԱԳՈՅԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԸ

- 8.1. Ընկերության կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների դիմաց գանձվող վճարների գնագոյացումն իրականացվում է՝ հաշվի առնելով հետևյալ սկզբունքները.

- 8.1.1. ինքնաֆինանսավորման սկզբունք՝ ծառայության դիմաց Հաճախորդի կողմից կատարվող վճարները պետք է փոխհատուցեն դրանց հետ կապված Ընկերության բոլոր ծախսերը,
 - 8.1.2. շահութաբերության սկզբունք՝ ծառայության դիմաց Հաճախորդի կողմից կատարվող վճարները պետք է Ընկերության համար ապահովեն շահույթի նախընտրելի մակարդակ,
 - 8.1.3. համադրելիության սկզբունք՝ ծառայության դիմաց Հաճախորդի կողմից կատարվող վճարները պետք է համադրելի լինեն ոլորտում նմանօրինակ ծառայությունների դիմաց գանձվող վճարների հետ,
 - 8.1.4. մատչելիության սկզբունք՝ ծառայության դիմաց վճարները պետք է մատչելի լինեն Հաճախորդի համար,
 - 8.1.5. նյութական շահագրգռվածության սկզբունք՝ Ընկերության կողմից ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեխանիզմը պետք է նյութական շահագրգռվածություն առաջացնի Ընկերության համար,
 - 8.1.6. նյութական պատասխանատվության սկզբունք՝ Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների ձևավորման մեխանիզմը պետք է նյութական պատասխանատվություն առաջացնի կողմերի մոտ իրենց պարտավորությունների կատարման հետ կապված:
- 8.2. Ներդրումային ծառայության դիմաց գանձվող վճարը հաշվարկվում է որպես տվյալ գործարքի հետ կապված ծախսերի և Ընկերության կողմից սահմանված միջնորդավճարի հանրագումար: Որպես գործարքի հետ կապված ծախս կարող են համարվել Հաճախորդի պատվերի կատարման հետ կապված ֆոնդային բորսայի, կենտրոնական դեպոզիտարիայի կամ այլ պահառուի կողմից գանձվող վճարները:
- 8.3. Ներդրումային ծառայության դիմաց գանձվող վճարը կարող են ունենալ ինչպես տոկոսային, այնպես էլ բացարձակ արտահայտություն:
- 8.4. Ընկերության գործադիր տնօրենը կարող է իր որոշմամբ սահմանել Ընկերության Բրոքերային գործունեության շրջանակներում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների մեծության սանդղակ:
- 8.5. Ընկերությունն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխել սակագները՝ նշված Հաճախորդին այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելուց առնվազն 10 աշխատանքային օր առաջ ծանուցելու պայմանով: Կատարված փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում Հաճախորդը կարող է միակողմանիորեն լուծել Ընկերության հետ կնքված ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագիրը՝ օրենքով և ՀՀ ԿԲ

նորմատիվ ակտերով սահմանված կարգով, որի դեպքում փոխադարձ հաշվարկները կատարվում են նախկին սակագներով:

9. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՈՂ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՌԻՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

9.1. Ներդրումային ծառայությունների մատուցման գործընթացում ներդրումային գաղտնիքի պատշաճ պահպանման և գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի կանխարգելման, ինչպես նաև Հաճախորդին պատկանող միջոցների և իրավունքների պաշտպանությունն ապահովելու համար Ընկերությունն իրականացնում է հետևյալ միջոցառումները.

9.1.1. Հաճախորդների միջոցների առանձնացված հաշվառում. Ընկերությունը վարում է առանձնացված հաշիվներ իր և իր Հաճախորդների արժեթղթերի և դրամական միջոցների համար,

9.1.2. Պատվերների (հանձնարարականների) գրանցամատյանի վարում. Ընկերությունը վարում է հաճախորդների կողմից տրամադրված հանձնարարականների (պատվերների) գրանցամատյան,

9.1.3. Գործարքների իրականացում՝ ըստ հանձնարարականների գրանցամատյանի գրառումների հաջորդականության. Ընկերությունը գործարքներն իրականացնում է՝ ըստ հաճախորդների կողմից տրված հանձնարարականների (պատվերների) հաջորդականության, եթե օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

9.1.4. Գործառնական ռիսկերը կառավարելու և նվազեցնելու նպատակով Ընկերությունում գործընթացները պատշաճ կանոնակարգվում են, պահպանվում են Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջները:

9.2. Ընկերության Ներքին աուդիտի կողմից օրենսդրությամբ և Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագրով սահմանված կարգով և ժամկետներում իրականացվում է ներդրումային ծառայությունների մատուցման հետ կապված գործընթացի մոնիթորինգ և ստուգումներ, ինչը նվազագույնի է հասցնում տարբեր տեսակի շահերի բախման հետ կապված, Ընկերության աշխատակիցների գործունեության արդյունքում առաջացող սխալների և բացթողումների ռիսկը: Ընկերության Ներքին աուդիտը ստուգումների ուսումնասիրությունների արդյունքում Ընկերության կողմից օրենսդրությամբ, այլ իրավական ակտերով սահմանված պահանջների ցանկացած խախտման, ինչպես նաև

հաճախորդների շահերին հասցված ցանկացած էական վնասի մասին սահմանված կարգով և ժամկետներում հայտնում է Ընկերության գործադիր մարմնին և Խորհրդին:

10. ՊԱՏՎԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 10.1. Ընկերության պատվերների կատարման քաղաքականությունը հաստատվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից:
- 10.2. Ընկերության Պատվերի կատարման քաղաքականությունը ներառում է տեղեկատվություն գործարքների կնքման տարբեր վայրերի (միջոցների) մասին, ինչպես նաև այն գործարքների մասին, որոնք հաշվի են առնվում այդ վայրերի միջև ընտրություն կատարելիս՝ ըստ արժեթղթերի յուրաքանչյուր դասի:
- 10.3. Ընկերությունը պետք է Հաճախորդին տեղյակ պահի Պատվերի կատարման քաղաքականության մասին և ստանա Հաճախորդի նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իր նկատմամբ կիրառելու վերաբերյալ:

11. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ և ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՀԱՃԱԽԵՐԴՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՍԱՀԱՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 11.1. Այն դեպքում, երբ Ընկերությունը հիմնավոր փաստերի հիման վրա հանգում է այն եզրակացությանը, որ իր և Հաճախորդի կամ տարբեր Հաճախորդների միջև Հաճախորդների Պատվերների կատարման ընթացքում կարող է առաջանալ շահերի բախում, ապա անհապաղ, բայց ոչ ուշ, քան Հաճախորդի Պատվերի կատարման պահը, Հաճախորդին տեղյակ է պահում այդ մասին՝ առաջարկելով շահերի բախումից խուսափելու եղանակներ:
- 11.2. Եթե Հաճախորդը հրաժարվում է օգտագործել Ընկերության կողմից իրեն առաջարկված շահերի բախումից խուսափելու եղանակները, իսկ շահերի բախումը կարող է առաջանալ Ընկերության տարբեր Հաճախորդների միջև, ապա Ընկերությունը Հաճախորդների Պատվերները կատարում է ըստ դրանց ստացման հաջորդականության, անկախ այն բանից, որ դրա արդյունքում Հաճախորդներից որևէ մեկը կարող է տուժել: Այդ դեպքում համարվում է, որ Ընկերությունը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը Հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով Պատվերներ կատարելու համար:

- 11.3. Եթե շահերի բախումը առաջանում է Ընկերության և Հաճախորդի միջև, ապա Ընկերությունը Հաճախորդի Պատվերը կատարում է այնպես, որպեսզի դրա արդյունքում տուժի ոչ թե Հաճախորդը, այլ Ընկերությունը:

12. ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 12.1. Սույն Ընթացակարգը հաստատվում է Ընկերության Գործադիր տնօրենի կողմից համաձայն Հիմնադրի որոշման և ուժի մեջ են մտնում Ընկերությունը Օրենքով սահմանված կարգով Կենտրոնական բանկում որպես ներդրումային ընկերություն գրանցվելու պահից:
- 12.2. Սույն կանոնակարգի փոփոխությունները և լրացումները հաստատվում են Ընկերության Իրավասու կառավարման մարմնի կողմից և ուժի մեջ են մտնում հաստատման պահից:
- 12.3. Սույն ընթացակարգով չկարգավորված հարցերը կարգավորվում են Օրենքով, Կանոնակարգ 4/07-ով, ինչպես նաև ներդրումային ոլորտը կանոնակարգող այլ օրենքերով, ՀՀ ԿԲ նորմատիվ և Ընկերության ներքին իրավական ակտերով:

ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Սույն փաստաթղթի նպատակն է Հաճախորդի ուշադրությանը հրավիրել այն ռիսկերը, որոնք առաջանում են կապված արժեթղթերում ներդրում կատարելու հետ:

“ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ” ՓԲԸ-ն ցանկանում է Հաճախորդի ուշադրությունը հրավիրել մի շարք ռիսկերի վրա:

Սույն նկարագիրը չի սահմանում բոլոր հնարավոր ռիսկերի սպառիչ ցանկն ու նկարագիրը: Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ արժեթղթերում ներդրում կատարելու վերաբերյալ որոշում կայացնելիս Հաճախորդը պետք է գնահատի և վերլուծի ինչպես սույն փաստաթղթում ներկայացված, այնպես էլ այլ հավանական ռիսկերը:

Արժեթղթերում ներդրում կատարելու հետ կապված յուրաքանչյուր ռիսկ գնահատելիս Հաճախորդին խորհուրդ է տրվում իր գիտելիքների և փորձի շրջանակներում խորությամբ ուսումնասիրել այդ ռիսկերի ազդեցությունը արժեթղթերի վրա:

Ռիսկը արժեթղթում ներդրում կատարելու հետ կապված կորստի հավանականությունն է:

Կախված կորստի հավանականության առաջ գալու հավանականությունից կարելի է դասակարգել հետևյալ ռիսկերը.

(ա) Պետության ռիսկ կամ քաղաքական ռիսկ

Հավանականություն, որ այն պետությունում, որտեղ գրանցված են կամ պահվում են արժեթղթերը, տեղի կունենան իրադարձություններ, որոնք կազդեն տվյալ պետության քաղաքական կամ տնտեսական կայունության վրա, որի արդյունքում Հաճախորդը ամբողջությամբ կամ մասնակիորեն կկորցնի իր ներդրումը կամ կկրի էական վնաս:

(բ) Արտարժույթային ռիսկ

Հավանականություն, որ արտարժույթի փոխարժեքը կփոխվի այնպես, որ արտարժույթով գնանշվող արժեթղթի ՀՀ դրամով արտահայտված գինը փոխվի Հաճախորդի համար անշահավետ ձևով:

(գ) Իրացվելության ռիսկ

Հավանականություն, որ կոնկրետ պահին հնարավոր չի լինի արժեթուղթը վաճառել այն գնով, որը ոչ էականորեն կտարբերվի այդ արժեթղթերով կատարված վերջին գործարքների գներից:

(դ) Գնային ռիսկ

Հավանականություն, որ արժեթղթի գինը կփոխվի Հաճախորդի համար ոչ ձեռնտու ձևով:

(ե) Վճարունակության ռիսկ

Հավանականություն, որ պարտքային արժեթղթի թողարկողը ժամանակին կամ ընդհանրապես չի կատարի արժեթղթի սեփականատիրոջ նկատմամբ իր պարտականությունները:

(զ) Տոկոսային ռիսկ

Հավանականություն, որ Հաճախորդի արժեթղթի հետ կապված տոկոսադրույքները կամ դրանց տարբերությունը փոխվի այնպես, որ Հաճախորդը դրա արդյունքում կրի վնաս:

(է) Պահառության կամ ենթապահառության ռիսկ

Հավանականություն, որ Հաճախորդը պահառուի կամ ենթապահառուի (որն իրականացնում է Հաճախորդի արժեթղթերի պահառությունը կամ ենթապահառությունը) անվճարունակության, անփութության կամ անօրինական գործողությունների հետևանքով լրիվ կամ մասնակիորեն կորցնի այդ արժեթղթերը:

(ը) Հարկային ռիսկ

Հավանականություն, որ նորմատիվ իրավական դաշտի անկատարությունը կամ փոփոխությունը կարող է հանգեցնել Հաճախորդի արժեթղթերով կատարվող գործառնությունների արդյունքում ստացված հասույթը ենթարկվի կրկնակի հարկման:

(թ) Իրավական ռիսկ

Հավանականություն, որ ՀՀ կամ այլ պետության արժեթղթերի շուկան կարգավորող օրենսդրության չիմացության հետևանքով Հաճախորդը ենթարկվի քաղաքացիական, վարչական կամ այլ պատասխանատվության:

Արժեթղթերում ներդրում կատարելու հետ կապված ռիսկերի հետ ծանոթացա

(Հաճախորդի անուն, ազգանուն կամ անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

(ստորագրություն) Կ.Տ.

(ամսաթիվ)

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔԻ
ԵՎ ՓՈՐՁԻ ՄԱՍԻՆ**

Պահանջվող տեղեկատվություն	Հաճախորդի նշումներ
Նշեք այն բրոքերային ծառայությունները, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Նշեք այն արժեթղթերով գործարքները և արժեթղթերը, որոնց հետ որևէ կերպ առնչվել եք	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների բնույթը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ծավալը (<< դրամ)	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների հաճախականությունը	
Ձեր կողմից արժեթղթերով կատարված գործարքների ժամանակահատվածը, որի ընթացքում կատարվել են այդ գործարքները	
Ձեր կրթական մակարդակը	
Ձեր մասնագիտություն(ներ)ը	
Ձեր զբաղմունքը	

(Հաճախորդի անուն, ազգանուն կամ անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

(ստորագրություն)

(ամսաթիվ)

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Սույնով “ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ” Փակ Բաժնետիրական Ընկերությունը, գործելով որպես ներդրումային ծառայությունների մատուցող և առաջնորդվելով “Արժեթղթերի շուկայի մասին” ՀՀ օրենքով և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով և հիմք ընդունելով

Ֆիզիկական անձ Հաճախորդի դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, անձնագրային տվյալներ (առկայության դեպքում), իսկ իրավաբանական անձ

Հաճախորդի դեպքում՝ անվանումը, գտնվելու վայրը, տնօրենի անունը, ազգանունը

կողմից Ընկերությանը տրամադրված տեղեկատվությունը, նախազգուշացնում է,

որ -----

----- ներդրումային ծառայության անվանումը և (կամ) արժեթղթերի նկարագիրը

չի համապատասխանում նրա պահանջներին

որ նրա կողմից տրամադրված տեղեկատվությունը թույլ չի տալիս գնահատել, թե արդյոք

----- ներդրումային ծառայության անվանումը և (կամ) արժեթղթերի նկարագիրը

Սույն նախազգուշացումը կազմված է 2 օրինակից, որից մեկը տրվում է Հաճախորդին, իսկ մյուսը մնում է Ընկերության մոտ:

“ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ” ՓԲԸ

գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

/-----/ Կ.Տ.

-- /-- /----

օր/ամիս/տարի

Նախազգուշացումը ստացել էմ

/-----/ (Հաճախորդի ստորագրությունը) Կ.Տ.

-- / -- /----

օր/ամիս/տարի

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Սույնով ես՝ _____,
(անուն, ազգանուն կամ անվանում, իրավասու մարմնի պաշտոնը և անուն, ազգանունը)

հանդիսանալով ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ ՓԲԸ Հաճախորդ համաձայն եմ որակվել որպես պրոֆեսիոնալ
հաճախորդ տեղեկացված լինելով, որ տվյալ դեպքում հաճախորդների պաշտպանությանն ուղղված
օրենսդրական որոշակի պահանջներ չեն գործում իմ նկատմամբ և այդ պատճառով կորցնում եմ որոշակի
պաշտպանվածություն:

(Հաճախորդի անուն, ազգանուն կամ
անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

(ստորագրություն) Կ.Տ.

(ամսաթիվ)

ՊԱՏՎԵՐ N

Պատվերի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի) ___/___ ___/___/___

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Գնային պայմանները

- Շուկայական հանձնարարական
- Գնման լիմիտային հանձնարարական
- Վաճառքի լիմիտային հանձնարարական
- Գնման ստոպ հանձնարարական
- Վաճառքի ստոպ հանձնարարական
- Գնման ստոպ լիմիտային հանձնարարական
- Վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

Ծավալային պայմանները

- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարումը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Արժեթղթերի քանակը	Գինը (միավոր)	Ընդհանուր ծավալ	Գործարքի տիպը (կարգավորվող/չկարգավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ

Սույնով հավաստիացնում եմ նաև, որ ծանոթ եմ Ընկերության պատվերների կատարման քաղաքականությանը և տալիս եմ իմ նախնական համաձայնությունն այդ քաղաքականությունն իմ նկատմամբ կիրառելու վերաբերյալ, ինչպես նաև հավաստիացնում եմ, որ Ընկերությունը պատշաճ ձևով ներկայացրել է արժեթղթերում ներդրումների հետ կապված ռիսկերի վերաբերյալ բավարար տեղեկատվություն և համաձայն եմ կրել սույն պատվերի հետ կապված բոլոր ռիսկերը:

 (Հաճախորդի անուն, ազգանուն կամ անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

 (ստորագրություն) Կ.Տ.

 (ամսաթիվ)

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
 Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

 (ստորագրություն) Կ.Տ.

 (ամսաթիվ)

Դիմում

Խնդրում եմ չեղյալ համարել իմ կողմից __/__/____ ներկայացված արժեթղթերի
գնման/վաճառքի պատվերը:

(Հաճախորդի անուն, ազգանուն կամ
անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

(ստորագրություն) Կ.Տ.

(ամսաթիվ)

ՊԱՏՎԵՐ N

(արժեթղթերի գնման/վաճառքի հետ կանչման, փոփոխություն կատարելու)

Պատվերի տրման ժամանակը (րոպե/ժամ/օր/ամիս/տարի) ___/___ ___/___/___

Հաճախորդի հետ կնքված պայմանագրի համարը և ամսաթիվը _____

Գնային պայմանները

- Շուկայական հանձնարարական
- Գնման լիմիտային հանձնարարական
- Վաճառքի լիմիտային հանձնարարական
- Գնման ստոպ հանձնարարական
- Վաճառքի ստոպ հանձնարարական
- Գնման ստոպ լիմիտային հանձնարարական
- Վաճառքի ստոպ լիմիտային հանձնարարական

Ծավալային պայմանները

- Բավարարել լրիվ
- Բավարարել մասնակի
- Հանել մնացորդը

Ժամանակային պայմանները

- Անմիջապես բավարարել կամ հանել
- Պահել հերթում մինչև բավարարումը

N	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Արժեթղթերի քանակը	Գինը (միավոր)	Ընդհանուր ծավալ	Գործարքի տիպը (կարգավորվող/չկարգավորվող շուկա)	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումներ

(Հաճախորդի անուն, ազգանուն կամ անվանումը, իրավասու մարմնի պաշտոնը)

(ստորագրություն) Կ.Տ.

(ամսաթիվ)

«ԼԵՆԴՄԱՐԿ ԿԱՊԻՏԱԼ» ՓԲԸ
Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

(ստորագրություն) Կ.Տ.

(ամսաթիվ)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Պատվերով գործարքի կնքման վերաբերյալ

Հաճախորդ՝ _____
 Պատվերի համարը՝ _____
 Պատվերի Ամսաթիվը՝ _____

N	Պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք) կամ պատվերի բնույթը	Պատվերի տեսակը	Գործարքի կնքման վայրը	Գործարքի ամսաթիվը/ ժամը (տարի / ամիս / օր / ժամ / րոպե)	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը)	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին նա նախօրոք չի տեղեկացվել	Նշում, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Ընկերությունը, վերջինիս խմբի մեջ գտնվող որևէ անձ, կամ Ընկերության մեկ այլ հաճախորդ, բացառությամբ եթե գործարքն իրականացվել է այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար

Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

_____ (ստորագրություն) Կ.Տ.

‘ _____ ’ 201 թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պատվերով կատարված գործարքների վերաբերյալ

(Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի) -----/-----/-----

Հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի) -----/-----/-----

N	Գործարքի տեսակը (առք, վաճառք)	Թողարկողի անվանումը	Արժեթղթերի դասը	Գործարքի առարկա հանդիսացած արժեթղթերի քանակը	Մեկ արժեթղթի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գործարքի կնքման ամսաթիվը (տարի/ամիս/ օր/)	Գանձվող միջնորդավճարի մեծությունը	Գործարքի կատարման (վերջնահաշվարկի)ստ պայմանները

Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

(ստորագրություն) Կ.Տ.

‘___’ ‘_____’ 201 թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Հաճախորդի արժեթղթերով և դրամական միջոցներով հաշիվների շարժի վերաբերյալ
(Ներդրումային ընկերության անվանումը, կազմակերպական-իրավական տեսակը)**

Հաշվետու ժամանակաշրջանի սկիզբը (օր/ամիս/տարի) -----/-----/-----

Հաշվետու ժամանակաշրջանի վերջը (օր/ամիս/տարի) -----/-----/-----

N	Հաճախորդի հաշվի տեսակը (արժեթղթերի, դրամական միջոցների) և համարը	Ամսաթիվը (օրը/ ամիսը/ տարին)	Գործարքի, որի հիման վրա կատարվել է արժեթղթերի և/կամ դրամական միջոցների շարժը, հերթական համարը գործարքների վերաբերյալ պարբերական հաշվետվությունում	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում մուտքերը	Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ելքերը	Հաշվետու ժամանակաշրջանի վերջում հաշվի մնացորդը

Գործադիր տնօրեն՝ Իրինա Տեր-Աբրամյան

(ստորագրություն) Կ.Տ.

‘ _____ ’ 201 թ.